

ՀՐԵԱՆԵՐՈՒ ԱՅԺՄԵԱՆ ԴԻՐՔԸ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՆԴԵՊ

Հրեաներու այժմեան դիրքը Յիսուսի հանդէպ նշանակելի փոփոխութիւն մը կրելու վրայ է, եւ ժամանակի նշանները ցոյց կուտան թէ արդէն սկսած են իրականանալ իրենց մասին Ս. Գրոց գուշարութիւնները: Հրեաները մեծ թիւով իրենց պատմական հայրենիքը կը վիրազառնան: Պաղեստին, որ երկար դարեր է վեր խոպանուած անբերրի ժայռերու կոյս մը կը ներկայացնէր, հիմա կը զարգանայ հրաշալիօրէն: Վաղուց ի վեր գոյութիւն ունեցող հակասմանական շարժումը ընդարձակ ծաւալ գտած է այսօր շատ մը տեղեր: Իսկ Հրեաները սկսած են, բարոյական ու հոգեկան տեսակէտներով, բոլորովին նոր վերաբերում մը յայտնաբերել Սիսուսի նկատմամբ:

Պաղեստինի հրէական վարժաբաններուն մէջ պարտաւորիչ եղած է հիմա Յիսուսի ուսուցումը, ու յայտնի փոփոխ մը կը տրէ հռչակելու Յիսուսը իրեն ամենէն հրաշագործը իրենց ազգի մարգարէներէն:

Հրէից այս վերաբերումն է անշուշտ պատճառ՝ որ առավարկներ եղած են վերահաստատելու Երուսաղէմի մէջ նախկին Սինհագրիները, որուն առաջին գործը պէտք է ըլլայ վերաքննութեան ենթարկել Յիսուսի մահազննումը:

Եթէ այս դատաստանին անարդարութիւնը ապացուցուի, այն տեսն Սինհագրիները քրիստոնեայ աշխարհին պիտի դիմէ ու պիտի խնդրէ որ ազատ կացուցուին Հըրեաները այն նախատիքէն, որ երկար դարեր է վեր կը ծանրանայ իրենց վրայ:

A. J. Pollock իր *Ջարմանայի Հրեան* (Le Juif étonnant) անուն գիրքին մէջ լոյս մը կը բերէ Հրեաներու դադափարի այս փոփոխութեան վերաբերմամբ: Անիկա Սինհագրիների կողմէ Յիսուսի դատին վերաքննութեան մասին խօսելով՝ կը գրէ.

Այս նպատակով նշանակելի փորձ մը տեղի ունեցաւ 1933 տարւոյ ամառը Երու-

սաղէմի մէջ, Դատական տեսանք կը բազանար արժանաշարք հրեաներէ: Ամբաստանողն էր Տքթ. Blandeislser, որ մեքենագրուած հազար երեսներէ բաղկացեալ գրութիւն մը կարգաւոր՝ փորձեց արդարացնել կայիափա քահանայապետ նախագահութեամբ գումարուած Սինհագրիների վճիռը, բացատրելով թէ անոր անդամները իրենց ներքին համոզումով գործած էին... Անոնք յանձին Յիսուսի տեսած էին օրուան կառավարութեան դէմ ապստամբապետ մը, որ չըլլապատուած համախոհներէ՝ ինքզինք թագաւոր կը հռչակէր: Անիկա նոր կրօնք մը կը քարոզէր, յանցանք մը՝ որուն համար իրմէ առաջ ուրիշներ ալ դատապարտուած էին:

Դատախազը չորս ժամ տեսչ իր ամբաստանագիրը վերջացուց՝ հոչ ուղղելով ատեստին, որ անհրաժեշտ Յիսուսի մասին տրուած առաջին վճիռը:

Բացարձակ լուծութեան մը մէջ յետոյ լուսեցաւ Տքթ. Reichwehr ի պաշտպանազականը: Ան կ'ապացուցանէր թէ անարգար եղած է Սինհագրիների դատաստանը եւ թէ՛ Յիսուս զոհն էր դատական անիրաւութեան մը: Ո՛ր սք կրցաւ ամբաստանել զԱյն օրէնքի դէմ ու եւ յանցանքի համար... Պրիզատոս անգամ անմեղ հռչակեց զԱնիկա՝ լուարով իր ձեռքերը ու ամէն պատասխանատուութիւն ձգելով ժողովուրդին վրայ... Յիսուս քարոզեց անձնուարացութեան ու հաճոյքներէ հրաժարման Աւետարանը, զոր դարուն կրօնական հասարակութիւնը չուէր քննադատել:

Տքթ. Reichwehr շարունակեց այսպէս ամբողջ հինգ ժամ: Յետոյ դատաստանները առանձնացան խորհրդակցելու, եւ դուրս ելլելով յայտարարեցին՝ թէ մէկի դէմ չորս ձայնով զճառած են ԴԱՍԱՊՍՏՅԵԱԿԻՆ ԲԱՑՍԱՐՁԱԿ ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆԸ:

Q. I.

